



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՆԱԽԱՐԱՐ  
Հ Ր Ա Մ Ա Ն

«30» «*հեկտեմբեր*» 2014 թ. N 162-Ա/5  
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂԵԿԱՍՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ -ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի՝ հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունում (այսուհետ՝ Նախարարություն) տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակել Նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Անուշ Զիթյանին:

2. Սահմանել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձի համար հետևյալ պարտականությունները՝

1) ապահովում է տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը,

2) տեղեկություն փնտրողին մատչելի ձևով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները և ձևերը,

3) մշակում է ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալները:



Գ. ՂԱԶԱՐՅԱՆ